ՀԱԿՈԲ ՍԱՀԱԿԻ ԱՐԱՄՅԱՆ
(1908—1955)

Սույն թվի նոյեմբերի 21-ին, երկարատև ու ծանր հիվանդությունից հետո, վախճանվեց հայրենադարձ մտավորական Հակոբ Սահակի Արամյանը։

Հակոբ Արամյանը ծնվել է Անտիոք քաղաքում (Ալեքսանդրետտայի շրջան) 1908 թվին։

1915 թվի համահայկական կոտորածների ժամանակ Արամյանը ծնողների հետ տեղափոխվում է Սիրիայի Համա քաղաքը, որտեղ ապրում է 4 տարի, այնուհետև անցնում է Ալեքսանդրետտա, որտեղ սովորում է հայկական նախակրթարանում և ավարտում այն։

1923 թվին Արամյանների ընտանիքը փոխադրվում է Կահիրե։ Արամյանը այստեղ մտնում է Գալստյան ազգային վարժարանը, որն ավարտելուց հետո հաճախում է ֆրանսիական լիսե։ Ֆրանսիական լիսեից շրջանավարտ լինելով ուսումնասիրում է իրավաբանություն։ Սակայն, 1936 թվին, հորը մահվան պատճառով ստիպված է լինում ուսումը կիսատ թողնել և, մորն ու եղբորը հոգսը իր վրա ունենալով, զբաղվում է գրական աշխատանքներով։ Նա սկսում է աշխատել «Արև» օրաթերթի խմբագրությունում որպես սրբագրիչ՝ բանաստեղծ Վահան Թեքեյանի խմբագրության օրով։ Թեքեյանի մոտ հմտանում է խմբագրության մեջ և դառնում թերթի եռանդուն աշխատակիցներից մեկը և պայքար մղում Սովետական Հայաստանի հակառակորդ հոսանքների դեմ։ Թեքեյանի մահից հետո Արամյանը մնում է «Արև» թերթի խմբագրության մշտական աշխատակից և թերթը ղեկավարում։

1945 թվի Ազգային-եկեղեցական ժողովի գումարման և երջանկահիշատակ Գեորգ Զ. Հայրապետի կաթողիկոսական ընտրության ժամանակ Արամյանը մասնակցում է եգիպտահայ պատվիրակության՝ որպես «Արև» օրաթերթի խմբագրապետ և թղթակից։

Հայաստանից վերադառնալով Եգիպտոս, նա որպես ջերմաշունչ հայրենասեր Սովետական Հայաստանի գովքն է շեփորում եգիպտահայության մեջ։

Արամյանը 1945 թվի վերջերին, որպես համոզված հայրենասեր, եգիպտահայերին հորդորում է վերադառնալ Մայր Հայրենիք և անձամբ օրինակ հանդիսանալով գլխավորում է 1947 թվի ներգաղթի եգիպտահայ առաջին քարավանը։

Արամյանը Հայրենիքում նույնպիսի խանդով աշխատում է օգտակար լինել իր շրջապատին. աշխատակցում է «Սովետական Հայաստան» և «Էջմիածին» ամսագրերին և հայրենադարձ երիտասարդության զանազան ասպարեզներում գտած հաջողություններին ու Հայրենիքի վերաշինության գովքն է հյուսում հիշյալ ամսագրերի էջերում։

Արամյանն ունի մի շարք մանր բանաստեղծություններ։ Որպես արդյունք տքնաջան աշխատանքի վերջերս լույս տեսավ նրա հոյակապ գործը՝ «Նեղոսի հովտում» վեպը։ Այս վեպը եղավ հանգուցյալի վերջին գրական ժառանգությունը։

Արամյանի հիշատակը միշտ թարմ կմնա մեր հիշողության մեջ։

Հանգի՜ստ նրա աճյունին։